ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրահանգով, սույն գրով հայտնում ենք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բոլոր թեմերին, վանքերին և հովվություններին, որ սույն թվականի Դեկտեմբերի 7-ին, Ուրբաթ օր առավոտյան ժամը 11.30—12.00, եկեղեցիների զանգերը սգո ղողանջով հնչեցվեն, ի հիշատակ տասնյակ հազարավոր զոհվածների, որոնք 7 Դեկտեմբեր 1988 թվականին տարերային անավոր երկրաշարժի զոհերը դարձան:

Նաև հայտնում ենք, որ ի հիշատակ երկրաշարժի բոլոր զոհվածների, Կիրակի 9 Դեկտեմբերին, կատարվի մասնավոր պատարագի և հոգեհանգստյան արարողություններ մեր բոլոր եկեղեցիներում և Բանին կենաց քարոզությամբ անդրադառնալ աղետին և մեր բազմահազար նահատակների անթառամ հիշատակին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
22 նոյեմբեր 1990 թ.